

ՏՈՒՍՏՈՅ, կոմս Լ.—«Ясная поляна»-ից: Ռոբինզոն: (փոքրերի համար):
Խարզմանեց փիլիպպոս Վարդանեան: Թիֆլիս, տպարան Յովհաննէս
Մարտիրոսեանի 1891 թ., գինն է 20 կ.:

Դիֆոլի ¹⁾ Ռոբինզոնը Սուրբ Գրքից
չետոյ, կարելի է ամենատարածւած
գիրքը համարել երկրագնդիս վերայ:
Այդ նշանաւոր գործը թարգմանւած
է բոլոր կուտուրական ազգերի լե-
զուներով: Այդ վերջիններս օգուտ
քաղելով Դիֆոլից մինչև ան-
գամ ստեղծել են իրանց սեպհա-
կան Ռոբինզոնները: Այդ աշխատու-
թեան նշանակութիւնը շատ մեծ է:
Դա իւր մէջ հալելու հաւատարմու-
թեամբ ներկայացնում է կուտուրա-
կան պատմութեան պատկերը. ահա
մենք տեսնում ենք, ինչպէս Ռո-
բինզոնը քարից իւր համար գործիք-
ներ է շինում, թէ ինչպէս իւր հա-
մար մորթուց շորեր է պատրաս-
տում, ինչպէս նա հում մսով է
կերակրւում և ալն և ալն: Այդ բո-
լորը մարդկութեան երեխակական հա-
սակի արդիւնքներն են: Գործիք-
ները և թէ կեանքի եղանակն ու

ապրուստը ժամանակի տարածու-
թեան մէջ սակաւ առ սակաւ կա-
տարելագործւում են և հասնում նորա-
գոյն ժամանակին: Մենք տեսնում
ենք այդ պատմութեան մէջ, որ մարդ
ներքին կարիքներով, աստիճան
առ աստիճան առաջին կոպիտ բնա-
կան դիրքից բարձրանում է դէպի
կրթութիւնը և զարգացում: Մի խօս-
քով Ռոբինզոնը իւր կեանքի մէջ
անում է այն պարբերութիւնը, ինչ որ
մարդկութիւնն ընդհանրապէս արել
է: Վիլլամսն իւր «մարկավարական
գասախօսութիւններին» մէջ Ռոբին-
զոնը անւանում է «պատմութեան փի-
լիսոփայութիւն»: Այս գեղեցիկ սանդ-
ժագործութեան նշանակութիւնը փոք-
րիկների համար արդէն շատ վա-
ղուց է հասկացել և արտասանել:
Ռուսոն Ռոբինզոնի պատմութիւնը
համարում է էմիլի սիրելի գիրքը
և վաղուց է, որ արդէն ձեռ-
նարկել են մանկական Ռոբին-
զոնը, ղուրս զցելով այդ պատ-
մութիւնից այն բարդ տարրերն, որոնք
հակառակ են մանկական հասկացո-
ղութեան, դարձնել մի հասա-
րակ և պարզ պատմութիւն: Եւ
չիրաւի մեծ մասամբ լաջողել է այդ:
Իողումիլ Գուլը այդ պատմական
Ռոբինզոնի մասին հետեւեալն է ասում
իւր «Ներխալութեան գիրք» վերնա-
գրով երկասիրութեան մէջ. «Ինչպէս
կարող էի ես երեխայութեան մասին

¹⁾ Դանէէլ Դեֆո (Defoe կամ de Foë),
անգլիական գրող, ծնւեց 1661 թւակ.
Լոնդոնում: Մուռւ 1791-ին: Գրական
գործիչներիցն էր և ժամանակակից քաղա-
քական կռիւների մէջ խռն. յետոյ 1719
թ-ին ասպարէզ եկաւ այս գլաւօքով Լոն-
կեցի Ռոբինզոն Կրուզոն կեանքը և ար-
կածները, որ բոլոր եւրոպական լեզու-
ներով թարգմանւեց (նաև հայերէն մի
քանի անգամ) և դառաւ հայր բազմա-
թիւ Ռոբինզոնադներէի, որոնցից մէկն է
նաև կոմս Տոլստոյի ներկայ գրքոյկը:
Մանօթ. Խմբ.

գրել, առանց Ռոբինզոնին լիչելու: Ո՛հ, դու Ռոբինզոն, զարմանալի մարդ, ո՛հ, դու Ռոբինզոն, գրքերի դիրք, դու երեխաների սրտերի մէջ տպւած սուրբ գիրք, դու բոլոր ժամանակների երեխաների աւետարան, Նրանի թէ դու միշտ անպակաս լինէիր երեխայի օրացուցից և նորա սրտում ժամանակ առ ժամանակ նորից չարութիւն առնէիր»:

Իմ ձեռքին է ահա մի մանկական Ռոբինզոն, որը Տոլստոյի գործ է:

Հռչակաւոր ռուս հեղինակին, ճիշտ է, լաջողել է մի հասարակ, երեխաներին հասկալի, պարզ պատմութիւն գրել. բայց նորա մէջ կան խոշոր պակասութիւններ, որոնք աչքի են ընկնում, երբ մարդ ճանաչում է եւրոպական լեզուներով գրած զանազան մանկական Ռոբինզոններ: Այդ պակասութիւնները կապւում են զանազան կտորների չոր ու ցամաք լինելու մէջ, որոնք անկարող են երեխայի հոգու մէջ խոր արմատներ գցել: Հենց դրբի սկիզբը մի կմախքի է նմանում, որն և ամենից շատ պէտք է երեխայի մէջ զգացումներ լառաջացնէ: Տոլստոյը շատ մակերև կերպով է անցնում այդ նշանաւոր կտորը: Նա մի քանի խօսքով է նկարագրում հօր և մօր ցաւակցութիւնն և Ռոբինզոնի փախուստը: Թնաորոշ են նաև պատմութեան ալն կտորներն, ուր Ռոբինզոնը փորձանքի մէջ Աստուծուն և իւր սիրելի ծնողներին վիշում է. բայց այդ կտորները Տոլստոյի գրքովի մէջ սառը տպաւորութիւն են անում. նա տեղ աեղ մինչև անգամ չի վիշում Աստուծու անունը կամ բաւականանում է մի քանի խօս-

քով, մինչդեռ Դիֆօի Ռոբինզոնը փորձանքի ժամանակ չփրում է, ձեռքերը բաղկատարած և լի զգացումներով զիմում է Աստուծուն, խնդրում, աղաչում է նորանից աղատութիւն և ալն: Նոյն իսկ վերջին փոթորիկն և Ռոբինզոնի կզղու վերաւ ընկնելն մի երկու խօսքով է վերջացնում:

Այդ աշխատութեան մէջ կան նաև ալլ անաջող տեղեր, ինչպէս օրինակի համար Ռոբինզոնի և Ուրբաթի չարաբերութիւնները: Ո՛ւր է Ուրբաթի անսահման վախն դէպի Ռոբինզոնը: Հեղինակը մինչև անգամ ասում է, որ Ուրբաթը շուտով սովորեց Ռոբինզոնի լեզուն, սկսեց նորան հասկանալ. դա հակառակ է մինչև անգամ առողջ մաաժողութեան: Ռոբինզոնն երկար ժամանակ զրադւած էր նորանով միայն, որ Ուրբաթը ճանաչէ Աստուծուն, հաւատալ նորա զօրութեան և ալդ խօսքերն ու մի քանի հասարակ աղօթքներ կարողանալ արտասանել:

Վերջապէս չը թւելով մի առ մի ալա գրքովի բոլոր պակասութիւնները, լիչենք միայն Ռոբինզոնի և հօր տեսակցութիւնը հայրենիք վերառնալուց ցետու: Այդ սրտաշարժ տեսարանն ալապէս է սկսում և վերջանում: «Հայրը ճանաչեց նորան և որդին ասաց. «հապա մալրս որտեղ է»: Հայրն ասաց. «մեռել է, նա միշտ ուզում էր քեզ տեսնել»: Ռոբինզոնը ասաց. «Յիմար էի, որ ճանապարհորդելու գնացի, փառք Աստուծու, որ ալժմ տանն եմ»: Այս սրտաշարժ տեսարանը, որ կարող էր փոքրիկ ընթերցողի քնքով սիրտը կատարեալ կերպարանափոխութեան

ենթարկել և լաց պատճառել, ալս երկտողովն և Ռոբինզոնի մի անմիտ պատասխանովն է վերջանում: Թող ընթերցողը ինքը դատէ. եթէ մէկը 25 տարի Ռոբինզոնի վիճակին ենթարկէր, և անքան տարուց չետուհորը տեսութեան արժանանար, միթէ միայն ալս խօսքերը կ'արտասանէր: «յիմար էի, որ ճանապարհորդելու գնացի, փառք Աստուծոյ, որ ալժամ տանն եմ»: Եւ կարծում եմ, որ արտասուքը կը խեղդէր նորան և ոչ մի խօսք չէր կարող արտասանել. նա կը փաթաթւէր նորա վզով, համբուրներին վերջ չէր լինիլ, վերջը անթիւ հարցեր կ'առաջարկէին երկու կողմից էլ, որդին հօրից ներողութիւն կը խնդրէր և ալն:

Մի նկատողութիւն էլ: Գուցէ նմանելու համար Աստուածաշունչի անպաճոյճ ոճին, Տօլստոյ արդէն չափազանց պարզ է դուրս բերում ամեն մի խօսակցութիւն իւր գրքովի մէջ: Այդ պատճառով է որ խօսակցութեան ժամանակ անքան «ասաց, ասաց» է գործածում, որ մարդ ակամայ փչում է ռուսների ԴՐՐԿ-ԴՐԿԵ՝ կամ Թիֆլիսցիների «կօսէ կօսէ»-ները:

Օրինակի համար. Ռոբինզոնը ասաց նրան. «իսկ դու ո՞ր ես գնում»: Նաւատէրն ասաց. «Հեռու տեղ եմ գնում—Աֆրիկա, ալետեղ

մի երկիր կալ, անունն է Գւինէա և մէջը սև սև մարդիկ են բնակւում»: Ռոբինզոնը ասաց. «ադ երկիրը չե՞ռ ո՞ւ է»: Նաւատէրն ասաց. «Նեռու է, ուզում ես միասին դնանք»: Ռոբինզոնը ասաց. «ես փող չունիմ»: Նաւատէրն ասաց. «ես իմ գրպանից կը տամ քեզ. իսկ դու կացիններ, գանակներ, գոլն գոլն ապակի. ներ կը գնես»: Ռոբինզոնը ասաց. «ինչացու են ալդ բոլոր բաները, դրանք ինձ հարկաւոր չեն»: Նաւատէրն ասաց. «դնիր, սև մարդիկն ալդ բաներից ոչինչ չեն հասկանում և դրանց փոխարէն շատ ոսկի և փղոսկր կը տան քեզ»: Ռոբինզոնը ասաց. «փղոսկրն ինչիս է պէտք»: Նաւատէրն ասաց. «փղոսկրն սպիտակ է և շատ փող կ'արժէ»: Եւ Ռոբինզոնն ասաց. «Նաւ, գնանք» (տես երես 8): Ալս փոքրիկ կտորի մէջ «ասաց»-ների թիւը դիւմինից մէկով է պակաս:

Վերջացնելով իմ նկատողութիւնները, թող կը տամ ինձ չիշեցնլ, որ փոքրիկների համար փոխադրած ամենալաջող և զեղեցիկ Ռոբինզոնն է, ըստ իս, Ննալի մանկավարժական սեմինարիակի տեսուչ և մանկավարժութեան պրոֆեսոր Վիլհելմ Ռալնիւրը, շատ արժանի է թարգմանել հայերէնի:

Բար.